լուծել, Նարծրագոյն առեանին վճիռով և Սէնհաֆաւ Սուլթանին հաստատութեամբը ։

Մերօրեայ կարգադրութիւնները փողերանոցին բոլոր գործակալներուն և ուրիշ պաշտօնատարներուն ծանուցուած է, նմանապէս հրամաններ ղրկուեցան նահանգներու կառավարիչներուն և Տէրութեան բոլոր պաշտօնատարներուն ։

Ըստ այս բարեկարգութեան վրայ, կը հրատարակէ ալեր արգելեալ ստակներէն ունի՝ փողերանոցին փոխանորդներուն տալ, որոնք վերոգրեալ ցուցակին գիներով պիտի առնեն. և չըլլայ թէ հնութեան անգամ ստակներն ալ բուն գիներէն աւելի գնով ստանան և տան, այսինքն նոր 20 նոցը, 10 նոցը, 5 նոցը, արծաթ 6 նոցը, 3 նոցը, 1 ½ նոցը, 5 նոցը, 20 փարանոցը, և 10 փարանոցը. և խարդախեալ ամենն տեսակ ստակներն ալ արգելուած է ։

Այս բարեկարգութիւնը՝ շատ կարեւոր և մի միայն ստակներուն շրջանառութիւնը դիւրացնելու համար ըլլալով, ով որ յանդգնի օրինազանց ըլլալու, իր թագաւորին դէմ ապերախտ է և սաստիկ պատիժներ պիտի ընդունի ։

Այս որոշումներն ամենուն իմացնելու համար առաջիկայ շրջաբերական թուղթը հրատարակեցինք ։

## ՍԻՆԿԻՓՈՒՐ

Ակլանտ 5 յունիս՝ Այս քաղաքս ամենեւին հիմակուան պէս շատ շոգենաւերու երկթեւեկութիւն տեսած չէր. որ այսօր ենթակա զորքերը առնելով, Կոստանդնուպօլսոյ և Լոնտոնէյի բանակները կը տանի ։ Լոնէի ունեցած Օսմանեան շոգենաւը իր չորրորդ ճանապարհորդութիւնը ըրաւ. ամեն մէկ անգամին 1000-1300 զինուոր կրելով. Աշօրայի Թիմարէթ նոր շոգենաւը հասաւ, և 1380 հոգիով քանի մը օր առաջ մեկնեցաւ. Աւստրիական Փրինչիփէ Ամէթէօ շոգենաւը 1500 հոգի, և անցեալ օրն ալ Աշօրայի Թիմարէթը իր երկրորդ ճանապարհորդութեան մէջ 7-8 հարիւր հոգի տարին ։ Այն զօրագունդը որ Անհէլմիօ Վ քանի փաշային հետ Իսքիւտ գնաց, և առջեւ 3 են այս տեղ ըլլալու էր՝ դեռ չեկաւ ։ Կը հաստատեն թէ փաշային այն զօրքերը այն տեղ բանակեցուցեր է՝ որուն պատճառը այն նահանգին մէջ ընդդիմութեան նշաններ երեւալը և քանի մը բէկերուն մայրաքաղաքը երթալու համար ցուցուցած քիչ յօժարութիւնը, և բնակիչներուն նորէն զօրք տալու ընդդիմութիւնն է. այս հասարակութեան խռովայոյզ բնութիւնը յայտնի է. նաեւ կերեւայ թէ այս տեղիս համար քիչ մը կանոնաւոր զօրք պէտք է հիմայ՝ որ կարգը և խաղաղութիւնը աւելի խոռովութեան մէջ մնայ ։ Ընդհանրապէս կը յուսուի այն երկրին վճռական վիրաբերեալ հիմակուան գիտցածնէս աւելի սուղ և ճիշդ լուրերը ։

Ընդհանուր կառավարութիւնը իր նկանձնորդներուն վարձքը վճարել տեսնալով, Աքէլանիկին հիւպատոսութիւնը վերցուց, ուստեղ և բաւական հարստաներ ունի ։

## ԵԳԻՊՏՈՍ

Աղեքսանդրիա 4 յունիս, Ն. բարձր. փոխարքային բոլոր բնակները հաւաքուած են իր քովը ։ Մէր նշանակածներէն ետքը, երեկ ծովակալ Սայիտ փաշային գերերէն և Ն. Կարծր. աղջիկը Տէֆիքթէրտարին կինը Կոստանդնուպօլսէն եկան ։ Ասնէկէ փաշան ալ քանի մը օրէն ի վեր Աղեքսանդրիա է և ուրիշ պաշտօնատարներ ալ կըսպասուին. ասկէց կիմացուի թէ մօտերս մէկ մեծ խորհուրդ մը պիտի ըլլայ ։ Արդէն Իսմայիլ փաշային իր հօրը հետ ասկէց խորհուրդ կրնէ. բայց կերեւայ թէ մինչեւ հիմա գլխաւոր նպատակնին՝ Սըրբին կառավարութեան վերաբերեալ բարեկարգութիւններն էին ։

Մահմուտը աժխի վերաբերեալ նիւթերն լուրերը շատ հաճելի են. կը ծանուցանեն թէ այս հիւանդութիւնը ամեն տեղ կատարելապէս դադարեցաւ ։ Աղեքսանդրիան ալ ազատ է այս հիւանդութենէն քանի մը օրէն ՚ի վեր ։

Նեղոս գետը կառատանայ բոտ փախարանաց և ամեն մարդու ուրախութիւն կը պատճառէ ։

Գաղղիացւոց շոգենաւը 120 ուխտաւոր բերաւ ։ Ամեն շոգենաւով ուխտաւորներ կու գան Ճիտտայէն ։

Այս ամիս Կալկաթայի արտաքոյ կարգի շոգենաւը չերեւցաւ. կարելի է թէ պատճառը սաստկագոյն հովերը ըլլան, որ այս տարի շարունակ կը փչեն ։ Կալկաթայինը մինչեւ 4—5 օր կը սպասուի ։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԱՆԳԼԻԱ

Լոնտրա. Կ. Մեհաէ. Մ. Եկատերինա թագուհին, որուն առողջութեան վիճակը հիմակուան պէս ամենեւին չեղեր էր. որովհետեւ պալատի տարադէպ ամփոփութիւնները վերցնելու, և իր զաւակը ինքը գինցնելու Թագուհւոյն այս գովելի ճիգը՝ իր բնական գերազանց հանգամանաց և առաքինութեանց ճշմարիտ ապացոյց է ։

### ԳԱՂՂԻԱ

Փարիզ 24 Յունիս.

Մեծապատիւ Արթէն պէյ Եգիպտոսի փոխարքային առաջին քարտուղարը, երեք ամիս Լոնտրա կենալէն ետքը, երեկ Փարիզ դարձաւ ։

— Տիար Տ՝ Օնուլ Գաղղիացւոց Թագաւորին տուած այս վերջին անգամ 600 հեծելազօրքով 10,000 արաբացիի դէմ մեծ յաղթութիւն մը ըրաւ, Ասփահանի ճանապարհով այս օրերս մայրաքաղաքս վերադարձաւ ։

Երէնս մը ժողովէ Կ. Ա. էշ. Գաղղիացւոց Թագաւորին միւս տղան, որուն համար ծանուցինք՝ թէ Գրանըճիայի կոյսեր քրոջը հետ ամուսնանալու է ։ Այն տեղ հարսնիքը կատարելով իր Իշխանուհի ամուսնոյն հետ մայրաքաղաքս գարձան ։

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս երկու կնիկ Իսքիւտի մէջ մեծամասնութիւն ըրին. անոր որ առաջ քաշելուն բացը ինկաւ՝ տարճանակը պայթեցաւ. և միւսն ալ իր ատրճանակը արձակելուն՝ զարկաւ ընկերին գլխուն և սպանեց. չեն գիտեր այս եղակի պատահարին պատճառը.

— Ռուսիայի Տէրութիւնը օրէնք մը դրեր է որ Երեւան Աքպէրդայի բնակիչներուն ուրիշ տակի դումար մը հատուցանել, եթէ իրենց աղջիկներն կամ զաւակներն Աքպէրդա աքսորուածներուն ամուսնացընեն, այս պայմանով, որ երկեքն ալ մշտ արգելուած, միայն տանը մէջ աշխատելու են ։

Տէպա օրագիրը կըսէ թէ Եգիպտոսի փոխարքային հրապարակաւ ծանուցեր է թէ ինքը հիմայ ծեր և տկար ըլլալուն, և իր յաջորդ Իպրահիմ փաշան ալ նմանապէս հիւանդ ըլլալով, մտք կընէ կառավարութեան ընկերակից ընելու իր Աբբաս թոռը ։ Ասոր այսպէս կը պատրաստէ իր տահմին իր իշխանութեան յաջորդութիւնը ։

## ՌՈՒՍԻՍՏԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանիս այս անգամ ալ քիչ գործառնութիւն ունի նշանակելու ։

Այս տարեկիս մէջ եղած երեւելի գործառնութիւնները հետեւեալ երկու ապրանքներուն վրայ է ։

Տոսն. գաշնագրութիւն մը եղաւ 1,500 քանթար Կարամինդի և Աքսորանի տեսակէն ցանթարը 255 դահեկանի փոխանակութեան տակով և 40 հակ ալ Պախտրի տեսակէն վաճառուեցաւ 285 դահեկանի ։

Ափիոն. անցած շաբաթ 1,000 չէքի վաճառուեցաւ՝ ապրանքը ետքը առնելու պայմանաւ և գինը 61 օրէն ետքը, անցածէն չէքին 1 ½ դահեկան աւելի գնով. և ամեն մէկ ստակին արժողութեան համար առաջին 5 հազարական դահեկան ալ հատուցանելով ։

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

7 Յունիս.

| | | |
|---|---|---|
| Լոնտրա | 110 ¾ | 111 |
| Փարիզ | 174 | |
| Վիեննա | 452 | |
| Մարսիլիա | 173 ¼ | 174 |
| Թրիեստ | 449 | 451 |
| Օտեսա | | |
| Լիվօրնօ | 146 | 147 |

Իզմիր, 16 Յունիս.

| | | |
|---|---|---|
| Լոնտրա | 122 | 123 |
| Փարիզ | | |
| Վիեննա | | |
| Մարսիլիա | 193 | 194 |
| Թրիեստ | 494 | 498 |
| Օտեսա | | |

Աստ փոխանակութեան տակով վաճառուեցան. բայց հինգնօրով Լոնտրան 110 ¾. և Մարսիլեան 178 ։

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԱՄԱՅԵԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ